

սի վաճառականութեան վերաբերեալ, որոնք, սակայն, ուղղակի Հայ հում մետաքսի վաճառականներուն հետ առնչութիւն չունին: Իրենց այդ պատճառարանութիւնները նոյնքան խախտու են, որքան որ էլթընի եռանդուն յուսադրութիւնները: Նոյնիսկ ճանապարհորդութեան եւ ծախքերուն մասին անոնք անկատար կամ սխալ գաղափար ունին:

Բայց հոս կարգ մը ուրիշ կէտեր ալ պէտք է յառաջ բերեմ: Էլթըն եւ իր հետեւողները նկատի կ'առնեն Նատիր Շահի կառավարութիւնը իր վստահելի տիրապետութիւն, մինչ Հայերը, որ Պարսկաստանի բոլոր միւս բնակչութեան նման նրկթապէս տատապեցան, արիւնաքամ ըլլալով, այս ազգ, բնաւոր ու վայրագ տիրապետին իշխանութեան տակ, այնպէս որ ստիպուեցան ամէն բան թողելով փախչիլ այդ երկրէն, որեւէ կեղծ պատճառով անվստահելի նկատեցին զայն: Նատիր, տեսնելով որ ամէն բան քայքայուած է իր շուրջ, անշուշտ ուշադիր եղաւ էլթընի շատ ու շատով խոստացող փայլուն առաջարկութեանց: Սակայն, ասիկա սպառնութիւն մը չէր, որ Նատիր կամ իր արբանեակները պիտի յարգէին իրենց բոլոր յանձնառութիւնները: Հաւանաբար, Նատիր, անգամ մը քաջալերելէ վերջ անդլիացիները, զանոնք ալ սոխի մը նման պիտի կեղուէր, եթէ կեղուելու արժանի բան մը գտնար անոնց վրայ:

Այս ապերախտ պայմաններուն մէջ Հայերը իրենց դարաւոր փորձառութեամբ հազիւ իրենց դոյութիւնը կը պահէին, — բան մը որ անդլիացիք չպիտի կարենային ընել եւ, ինչպէս պիտի տեսնենք, չկրցան ալ: Արեւելքի մէջ այդ ատեն քաղաքականութիւնները շատ եւ շուտ փոփոխական էին, ըլլալով կամայական քմահաճոյքը այս կամ այն Շահին, տիրապետողին: Այս փոթորիկներուն առջեւ միայն ճիւղն եղէզը կրնար իր գոյութիւնը պահպանել, այն ալ յարատեւօրէն գետին պաղնելով, ծռելով, ինչպէս որ Հայ վաճառականները կ'ընէին: Բայց այս ճիւղնութեամբ իսկ պայմանները գրեթէ յուսահատեցուցիչ էին, երբ ատոնց վրայ աւելցաւ նաեւ անդլիացուց, մանաւանդ էլթընի եւ իր հետեւորդներուն պայ-

մաններուն անդիտակ շարժումները, անհաշիւ խոստումները, որոնք վտանգուած Հայ վաճառականական նաւը կրնային ընկղմել՝ անշուշտ իրենք ալ ջրասոյղ ըլլալով կամ գոնէ բնաւ Հայոց ընկղմուէն չօգտուելով:

Որոչ է, որ բորոտ, անհաշիւ, եռանդուն խոստումներով անդլիացիք կրնային շլացնել պարսիկներն եւ ռուսները, որոնք նոյն ծանր պայմանները պիտի պարտադրէին Հայոց ալ: Հայերը անշուշտ չպիտի կրնային գոհացնել այդ պայմանները, իսկ անդլիացիք ալ, դործի եւ փորձառութեան ձեռնարկելէ վերջ, պիտի տեսնային, թէ որքա՞ն յիմարապէս առաջ նետուած էին, թէ իրենք ալ իրենց կարգին չպիտի կրնային իրենց փայլուն յուսադրութիւնները կատարել: Բայց մինչեւ այդ ատեն արդէն ճգմուած, օրհասական կեանք ապրող Հայ վաճառականութիւնը մեռած պիտի ըլլար:

Ասկէ զատ, հայոց այս հողամասին մէջ հում մետաքսի եւայնի առեւտուրին դարբեւէն մեծագոյն միասուողները դարձեալ անդլիացիք իրենք պիտի ըլլային: Էլթընի այս ձեռնարկութիւնը, կ'ըսէ Հանուէյ, մասնաւորապէս վախցուց Թուրքիոյ Բրիտանական ընկերութիւնը, որ մեծ ճիգով պայքարեցաւ այդ ծրագրին գործադրութեան դէմ, «ատարկելով որ ոչ միայն իրենց հիմնօրէնքին դէմ անիրաւութիւն պիտի ըլլայ, այլ նաեւ նաւարկութեան օրէնքին դէմ, որ այնքան երկար ատեն Բրիտանական վաճառականութեան պատնէշը նկատուած է: Եւ թէեւ անոնք երբեք ներկայացուցութիւն չեն հաստատած Պարսկաստանի հիւսիսային գաւառներուն մէջ, սակայն, առեւտուրը անկէ Հայէպ եւ Զմիւռնիա բերուած Հայերու միջոցաւ, մեծ չափերով իրենց ընկերութեան մէջ կեղբոնացած էր, դրամներով, որոնք իրենց ներկայացուցիչները սովորած էին ընել այդ Հայերէն»:²⁾

Այս թեր ու դէմ վիճարանութիւնը եւ պայքարը շարունակուեցաւ Ռուսիոյ եւ Թուրքիոյ ընկերութեանց միջեւ: Սուր հանգամանք ստացաւ այնքան, որ Անգլիոյ թագաւորին եւ

2) Անդ՝ էջ 35: